ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Հայ պատանի շախմատիստների փայլուն նվաճումները

## *Գաբրիել Սարգսյանը՝ աշխարհի չեմպիոն, Լեւոն Արոնյանը, Կարեն Ասրյանը՝ փոխչեմպիոններ*

Իսպանական Մենորկա կղզում, «Գալա Գալդանա» հյուրանոցային համալիրում անցկացվող աշխարհի շախմատի պատանեկան առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչները գերազանց հանդես եկան՝ նվաճելով մեկ ոսկե եւ երկու արծաթե մեդալներ:

Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում վերջին տուրից առաջ աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճելու հնարավորություններ պահպանում էին հինգ մասնակիցներ, այդ թվում՝ հայ երկու պատանիներ: Լեւոն Արոնյանը բավականին արագ պարտության մատնեց ուզբեկստանցի Խամրակուլովին, վաստակեց 8,5 միավոր եւ սկսեց սպասել Գաբրիել Սարգսյանի եւ ֆրանսիացի Բաքրոյի մենամարտի ավարտին: Էթիեն Բաքրոյին անհրաժեշտ էր միայն հաղթանակ, բայց նա, չկարողանալով որեւէ առավելության հասնել, առաջարկեց ոչ-ոքի: Երբ Գաբրիելն ընդուներ հաշտության առաջարկը, ապա մրցաշարը կավարտեր Արոնյանի եւ իտալացի Վալեխոյի հետ հավասար արդյունքով, եւ այդ դեպքում չեմպիոն կհռչակվեր գործակիցների աղյուսակով ավելի բարձր ցուցանիշ ունեցող Լեւոնը: Սակայն Սարգսյանը մերժեց Բաքրոյի առաջարկը եւ շատ սուր պայքարում տանելով սկզբունքային հաղթանակ, մրցաշարն ավարտեց հրաշալի արդյունքով՝ 11 հնարավորից 9 միավոր:



Գաբրիել Սարգսյան



Լեւոն Արոնյան



Կարեն Ասրյան

Այսպիսով, երեւանցի 13-ամյա դպրոցական Գաբրիել Սարգսյանը նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը, իսկ մեր մյուս պատվիրակը՝ Լեւոն Արոնյանը, գործակիցներով առաջ անցնելով Վալեխոյից, արժանացավ արծաթե մեդալի: Ընդգծենք, որ հայ երկու շախմատիստներն էլ ամբողջ մրցատարածությունն անցան առանց պարտության: Արժե նաեւ նշել, որ առաջին մրցանակի հիմնական թեկնածու համարվող Բաքրոն, որը երեւանյան օլիմպիադայում լրացրել էր գրոսմայստերի նորման եւ պարտության մատնել օլիմպիական չեմպիոն, Ռուսաստանի թիմի անդամ Ռուբլեւսկուն, Մենորկայում Սարգսյանից եւ Արոնյանից հետ մնաց համապատասխանաբար 1,5 եւ 1 միավորով:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարի եզրափակիչ տուրում Կարեն Ասրյանը հաղթեց Պերելշտեյնին (ԱՄՆ) եւ 8 միավորով 1–5-րդ տեղերը բաժանեց Գերշոնի (Իսրայել), Ասեսեյի (Հունգարիա), Մալխի (Անգլիա) եւ Բախտաձեի .(Վրաստան) հետ: Գործակիցների հաշվարկով Ասրյանը արժանացավ արծաթե մեդալի՝ չնչին տարբերությամբ զիջելով չեմպիոն հռչակված Գերշոնին: Ահա մեր մյուս մասնակիցների արդյունքները. Լուսինե Ամրեսյան, Լիլիթ Մկրտչյան, Դավիթ Պետրոսյան, Վարուժան Հակոբյան, Արթուր Չիբուխչյան՝ 6,5-ական միավոր, Անի Ավանեսյան, Նելլի Աղինյան՝ 6-ական, Միլենա Եսայբեկյան՝ 5,5, Գեւորգ Հարությունյան, Հերմինե Մխիթարյան՝ 5-ական միավոր:

Գ. Հ.